

Փոփոխություններ՝ սոցիալական ծախսի փոխհատուցման գործընթացում



Եթե վճարումը չի կատարել հայտարարատու հանդիսացող անձը

2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված սոցիալական ծախսերի փոխհատուցումից հայտարարատու ֆիզիկական անձը կարող է օգտվել նաև այն դեպքում, երբ սոցիալական ծախսերի դիմաց փաստացի վճարումը կատարվել է այլ անձի կողմից, սակայն իր միջոցներով, ինչը պետք է հիմնավորել համապատասխան փաստաթղթերով:

Իսկ 2025 թվականի հունիսի 1-ին և դրանից հետո կատարված սոցիալական ծախսերը կփոխհատուցվեն, եթե սոցիալական ծախսերն անմիջականորեն կատարվել են հայտարարատու ֆիզիկական անձի կողմից: Բացառություն են կազմում դասագրքերի վարձակալության նպատակով կատարված ծախսերը և աշխատողից հատուցում ստանալու պայմանով գործատուի կողմից ապահովագրական փաթեթների ձեռքբերման գծով կատարված ծախսերը:



Հաշվարկային փաստաթղթի դուրսգրում համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից

Համայնքների պատվերով համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների մասով հաշվարկային փաստաթղթերը համայնքների անունից կարող են դուրս գրել համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները:

Սա վերաբերում է այն դեպքերին, երբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների համար վճարվում է տեղական վճար՝ այն համայնքային բյուջե, որի ենթակայությամբ գործում է տվյալ հաստատությունը:



Եթե առողջության ապահովագրական փաթեթը ձեռք է բերել գործատուն

Եթե առողջության ապահովագրական փաթեթը աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի համար ձեռք է բերել գործատուն, այսինքն որպես ապահովագրի հանդես է եկել գործատուն, սակայն ապահովագրավճարի գծով կատարված ծախսի դիմաց աշխատողից ստացել է հատուցում, ապա հայտարարատու հանդիսացող աշխատողը՝ գործատուին տրամադրված հատուցման գումարի մասով, կարող է օգտվել փոխհատուցումից:

Այս դեպքում գործատուի կողմից ապահովագրական ընկերությանը տրվում է տեղեկանք՝ ապահովագրավճարի մասով աշխատողից հատուցում ստանալու վերաբերյալ, որի հիման վրա ապահովագրական ընկերությունն ապահովագրի անձի՝ գործատուի անունով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթում, որպես սոցիալական ծախս կատարող, նշում է հայտարարատու հանդիսացող աշխատողի տվյալները: Այս կարգավորումը կիրառելի է 2024 թվականի հունվարի 1-ից:



Փոփոխություններ՝ առողջապահության գծով սոցիալական ծախսի փոխհատուցման կարգում

Սոցիալական փաթեթի շահառուները, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ իրականացնող կազմակերպությունների աշխատողներն առողջության ապահովագրական փաթեթի գծով սոցիալական ծախսի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն սոցիալական փաթեթի շահառու և նշված կազմակերպությունների աշխատող չհամարվող ընտանիքի անդամների համար ապահովագրական փաթեթի ձեռքբերման ծախսերի մասով:

Հիշեցնենք, որ սոցիալական փաթեթի շահառուները և նշված կազմակերպությունների աշխատողները փոխհատուցումից կարող են օգտվել նաև իրենց և/կամ ընտանիքի անդամների համար ատամնաբուժական ծառայությունների մասով կատարված ծախսերի մասով: